# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Միսակ Ապելյանի անվան միջնակարգ դպրոց> ՊՈԱԿ-ի դասվարի /20 դասաժամ/ , ֆիզկուլտուրայի

/11 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

*Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝*

*1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),*

*2.Փաստաթուղթ ( դիպլոմ)՝, Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*

*3.Անձնագրի պատճենը,*

*4.Ինքնակենսագրություն (Ձև 4),*

*5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),*

*6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի*

*7. Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,*

*8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-ից 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբեր 15-ին ժամը 14.00-ին ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Մ. Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ , գյ. Նորաբաց :

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094238080, 0236-6-26-49 հեռախոսահամարներով: